

Փ Ո Ւ Ն Ձ

Օ Ր Ա Պ Ի Ր

Ամեն օր կհրատարակուի : — Հատը 40 փարայ է : — Պօլիս բաժանորդ ըլլալ ուզողը մէկ արծաթ Մէճիտ պիտի վճարէ 100 թուոց համար իսկ գաւառաց մէջ 25 դրչ, դարձեալ 100 թուոց համար, թղթաատրութեան ծախքէ աղատ ըլլալով : — Ծանուցման տողը 40 փարայ է մէկ անգամի համար : — Լրագրին վերաբերեալ նամակ եւ ուրիշ որ եւ է դրութիւն պէտք է ուղղել առ Տնօրէնն ի Ղալաթիա Ս. Լուսաւորիչ եկեղեցւոյ վարի գրանը կից նոր Գրատունը :

ԱԶԳԱՅԻՆ

Առաջիկայ սրբաթ օրը Տեառն ընդառաջի տօնն ըլլալով. ամեն Տեղապահ Հայրն այսօրուան համար ժողովի հրահրերը է խառն ժողովոց մեծ. անդամները, և ինքն ալ այս պատճառաւ չէ ընդունելու հանդիսադիր գանուիլ յուղարկաւորութեան հանդիսի մը, որուն համար յատկապէս հրահր եղեր է : — Նորին սրբազնութիւնն ահա այսպէս ևս կապացոյցանէ իւր անշահատրութիւնը :

— Տեղապահ Ս. Հայրն երկուշաբթի օրը տեսութեան գնաց բարձր. Ապի փաշային, Եուրայի—Տէվլէթի նորընտիր նախագահ վեժմ. Քեամիլ փաշային, Գրպըրալ Մէհմէտ փաշային, Պէլլիկճի էֆէնտիկն և Մէզահիպի գրասենեակին վերատեսչին : — Նորին սրբազնութիւնը յատկապէս ինդրեր է բարձր. Ապի փաշայէն որ բարնհաճի անապարեցունել կարնոց առաջնորդ վեհապետեան գեր. Յարութիւն եպիսկոպոսի վերադարձն : Լսածնուս նայելով, այս մասին դուհայոցիչ պատասխանն ընդունել է Նորին բարձրութեանն :

— Ս. Տեղապահը ուշագրութեան

առնելով օրագրոյն երկուշաբթի աւուր թուովն իրավաի առաջնորդին վերաբերեալ անհաճոյ հրատարակութիւնը, փութացեր է բացատրութիւն պահանջել յիշեալ առաջնորդէն :

Սիրելի է մեզ լսել թէ մեր հրատարակութիւնը անստոյգ է :

— Աղթամարայ վիճակայիններէն խումբ մ'անձինք կիրառիէ օրը Ս. Տեղապահին ներկայանալով, Աղթամարայ կաթողիկոսական խնդրոյն վերջանալն և խաչատուր եպիսկոպոսին վերագարձը ինդրեր են՝ զանի անմեղ ցուցնելով : Այսօր ալ այս մտօք հանրագիր մը արտի ներկայացունեն եղեր խառն ժողովոյ : Չեմք գիտեր այսօր ժողովոյն կողմանէ ինչ պատասխան տրուելիքը, բայց Նորին սրբազնութիւնը կիրառիէ օրը ներկայացունելուն գիտողութիւն ըրեր է թէ « Առայժմ այս խնդրոյն համար նոր որոշում մ'ընել դժուարին է, և պէտք է սպասել ազգային Սահմանադրութեան հաստատութեան » :

— Կլսեմք թէ Չարսանճագի սոց. դայնոց գանդասաներն տակաւին վերջացած չեն : Այս վիճակին ազգային ըրն գարձեալ տառապանաց մէջ կը

դանուին, և Պատրիարքարանի օգնութիւնը կինդրեն եղեր: Չգիտցուիր թէ ինչ արդիւնք ունեցաւ ապէս յառաջ Չարսանճագ զրկուած մասնաժողովն, որոյ մէջ էր Աղաբէգեան Սարգիս էֆէնտին ալ:

—Ուրախութեամբ կիմանաւք թէ՛ Տեղապահ սրբազանը ամեն շանքէ զորժ կզնէ, ոստիկանութեան դուռը շատ ժամանակէ ի վեր բանտարկեալ ազգայնոց ազատութեան համար:

—Կիլիկիոց վիճակները զրկուած կանգակին օրինակը ձեռքերնիս անցած ըլլալով, վաղը պիտի հրատարակեմք ի տեղեկութիւն ընդհանուր ազգիս:


—Ս. Տեղապահը կջանայ ազգային Սահմանադրութիւնը օր յառաջ երևան հանել: Ստուգած եմք որ վերաքննութեան դործն աւարտած է. բայց յառով կիմանաւք որ մասնաժողովն անփոյթ կենալով պատճառ կըլլայ ուշանալուն: Միթէ այնչափ դժուարին է անդամ մը ժողովուրդ և վերջին կարգադրութիւն մ'ընելը, որպէս զի ընդհանուր ժողովոյ ներկայացուի: Մասնաժողովին դէմ այս պատճառաւ դանդառներ կըլլան, և իրաւացի են: Ինչ... միթէ մասնաժողովին ձեռքը խողալի՞ք է Հայոց ազգը: Բ. Դոնէն աւելի շուտով Պատրիարքարան զրկուեցաւ. իսկ մէկ քանի հայերու — ազգէն ընտրուած հայերու — ձեռքէն առնելը այսչափ դժուարին կըլլայ...:

—... Տէր

Ափից քանի մը օր առաջ լրագրոյդ նախորդ թիւերուն մէկուն մէջ Ձեզ ուղղուած մէկ նամակ մը հրատարակէր էք, յորում գրուած է թէ կեսա-

րից Արամեան ընկերութեան ազգկանց դպրոցին ծախքը Մանուկեան ներս կողմէն կհոգացուի: Ասի այսպէս չէ. թէ և այս դպրոցի ծախքը հիմա մեր ձեռք կըլլայ, բայց ոչ լոկ մեր անձնականէն այլ ընկերութեան կանխու հաւաքած ստակներով:

Սեե+երի՛ Մ. Մանուկեան



ԽՍՆԻՆ ԼՈՒՐԵՐ

Պաշտօնական կ'ըրպով ծանուցուած է Եւրոպական լրագրաց թէ դեպքանաժողովոյն յայտարարութիւնը Յունաստան ընդունելով, քաղաքական և վաճառականական յարաբերութիւնները կըկին հաստատուած են և օգոստոսափառ Սուլթանը հրաման ըրած է որ Բ. Դրան վերջնագրոյն համեմատ ձեռք առնուելիք միջոցները եւս մնան:

—Վիեննայէն կիմացնեն թէ Տալուս փաշա՝ որ Տաճկաստանի երկաթ թուղեաց համար փոխառութիւն մը ընելու պատճառաւ յիշեալ մայրաքաղաքը կզանուէր, ֆարիզ երթալու համար երկուշաբթի օրը ճամբայ ելեր է: Խօսք կայ թէ գերմանացի ռեզանաւորաց հետ միացնել կուզուի անգղիացի և գաղղիացի սեղանաւորները, և օտմանեան կայսրութեան ընդհանուր ընկերութիւնը պիտի մասնակցի այս դործոյս:

—Գանձուց նորքնաիր պաշտօնեաց Սաարգ էֆէնտին 15 օրէն մայրաքաղաքս կհասնի:

—Ազիզիյէի չոգենաւուց ընկերութեան մէկ նաւը, այն է Կալիուս չոգենաւը ընկրմած ըլլալով, Թիւրքի գաղղիական լրագիրը ըսած էր



Թէ «մէկը եթէ կուզէ ինքզինքը ըստ պահեսել, այս բնկերութեան մէկ նաւը մտնէ» : Այս խօսքիս վրայ յիշեալ բնկերութեան կողմանէ գատ բռնըւելով թիւրքի լրագրոյն հետ, այս վերջինը հինգ օսմանեան ոսկի տուգանքի դատապարտուեցաւ : Կերևայ թէ, կրտէ Լէվրնթ Հէրրլո՛ որ այս դատը կ'պատմէ, այս դատը տեսնող յանձնաժողովը համոզուած է որ թիւրքի լրագրոյն խմբագրապետը այս դատողութիւնը ընելով ճշմարտութեան չէ խոտորած :

— Բաթրի գաղղիական լրագիրը յօդուած մը հրատարակելով կ'պահանջէ որ Աղբիական ծովուն վրայ Օսմանեան տէրութեան ունեցած Ըսբիչ նաւահանգիստը Գարաթաղի արուի :

— Կլտեմք թէ՛ Յունաց ամեն. Պատրիարքը ներկայ պիտի գտնուի Ֆուատ փաշայի յուղարկաւորութեան հանդիսին :

— Կալաթիայի հելլենական նամակատունը բացուելու վրայ է, որուն անօրէն պիտի ըլլայ Պ. Բօսթանթինի փի. Պ. Կալաթիի տեղ :

— Խօսք կայ թէ Տանիչ էֆէնտի որուն համար ըսուած էր թէ Բորֆուի ընդհանուր հիւպատոս անուանուեր է, կոստանդ. էֆէնտիին տեղը պիտի անցնի :

— Լէվրնթի ըսածին նայելով, երկուշարթի օրը բարձ. մեծ Եպարքօսը երկար տեսութիւն մը ըրած է ոստիկանութեան պաշտօնէին հետ : Կկարծուի թէ պաշտօնէիցի փոփոխուիլութիւն մը ըլլայ այս օրերս :

— Աթէնքի Օսմանեան դեսպան Ֆօթիաթէս պէյը իւր պաշտօնաստղին պիտի դառնայ : Հեռուարս սուտ

է այն լուրը որով կ'ըսուէր թէ Միւնիֆ էֆէնտին ընտրուած է այս պաշտօնին :

Նոյնպէս կ'իւրթանք հաղորդել որ յունաստանի Օսմանեան հիւպատոսները կ'պատրաստուին եղեր իրենց պաշտօնատեղը դառնալու :

— Պրուսայի մէջ Խիւտավէնտիկեար անուն տաճկերէն լրագիր մը հրատարակիլ սկսաւ առ այժմ շաբաթը երկու անգամ, և տարեկանն 100, վեցամսեայն՝ 30 զուրուչի, իսկ հասար 20ական փարայի տարու պայմաններով : Այս լրագրին առաջին թիւն երէկ տեսնելու պատիւ ունեցանք, մեծարգոյ խմբագրապետին կողմանէ յատկապէս զրկուած ըլլալով մեղի փոխանակութիւն : Այս թուոյն նախելով, Խիւտավէնտիկեարը պիտի կրնայ տաճիկ լրագրաց մէջ օգտակարագոյնն ըլլալ :

— Աթէնքէն լուր կուտան թէ Գէորդ թագաւորը խորհրդարանին լուծման նկատմամբ եղած հրովարտակր ստորագրեր է և նոր ընտրութիւնները մայիսի սկիզբներուն ձգուեր են :

— Մեքսիկայի մէջ սպստամբութիւն մը ծագեր է :

— Պապական մարտաւունը Նաբօլիէն զրկուած մէկ անուկ մը բըններ է, որուն վրայ թուղ շարուած է եղեր, և տակը՝ Օրսինիի «մարտ» :

— Վարչաւիայի բերդը շատ պիտի մեծնայ և 130 տուն պիտի փարաւնուին եղեր յառաջակայ դարնան :

— Պէրլինի մէջ պարահանդէս մը տեղի ունենալով հոն Պ. Պիլմարք գեղեցիկ կնոջ մը փայելուչ դէմքէն կ'հրապարի և կուզէ որ անոր ձեռքի փունջին մէջ նրան առնէ, մէյմ'այ

Թեթև հովանոցի հարուած մը կը արուի մասնեբուն : « Ներեցէք Պ. կոնն , կրտէ կինը , առի գերմանական նահանգ մը չէ , առի կուզուի » :

— Տանցիկի նաւահանգստին մէջ մեծ դործունէութեամբ շինուելու սկսուած են երկու զրահաւոր նաւեր . և ուրիշ նաւեր ալ կզինուին եղեր , ուրոնք Գիէլ պիտի երթման շուտով :

— Սպանիոյ արդի կառավարութեան մատուցանելու համար բազմաթիւ ստորագրութիւններ կ՛ողփուին Պուրկուսի նահանգին մէջ : Ասոնց նպատակն է խնդրել կառավարութեանէն որ ներում շնորհէ Պուրկուսի կառավարիչն սպանողաց , եթէ մահուան դատապարտուած ըլլան օրէնքով :


— Օրագրոյս միջոցաւ ծանուցած ենք ալպանիացիի մը օսմանցի կին մը սպաննելը , և բռնուիլը : Այս ոճրագործին դատապարտութեան վրայ լէվրնիթ Հէրրլա կրտէ թէ՛ երրորդանդամ քննութեան ներկայանալով կը խոստովանի իր ոճիրը , կը ատապարտուի կախուելու :

Այս վճիռն դործադրել յանձն կառնէ դատիկանութեան զինուոր մը և առտուն կանուխ բանակէն դուրս հանելով չարագործը՝ կիմացենն որ Տրապիզոն աքսորպիտի զրկուի : Բայց երբ ասնջանաց տեղը կհասնին , հան կիմացենն որ ալօթքը ընէ . կմերժէ ալպանիացին , և գահիճը կջանայ խեղզանը ձգել վիղը . բայց որքան որ կապ կը պուսած էր , կկուռէր կմնչէր , ուրով խել մը բազմութիւն կ՛ողփուի հոն . վերջապէս չուանը կանցնուեն և կկըղզեն չարագործը : Յետոյ մարմինը մը սողորձի մը դռնէն վար կկախեն կէս ժամու չափ :

— Գիտական Յովսէփ Եֆէնտին որ Թիւրքիթ քալէմիի անգամ էր , Բէշթի հիւպատոսարանին քարտուղար անուանեցաւ :

— Քարագիւղի կամուրջին վրայ երկու շարթի օրը եղան մը սաքը կը կտարի գերաններուն մէջ եղածին միջոցին մէջ մնալով : Այս տեսակ վըտանգաց առաջը առնելու համար լէվրնիթ Հէրրլա կրտէ թէ շուտով նորոգութեան պէտք ունի այս կամուրջը , որպէս զի ուրիշ կենդանիի մը կամ մինչև անգամ մարդու խոկ վնաս մը չարտահարի :

— Վերջին օրերս Գարագեղի մէջ ձկնավաճառի մը քով մէկը կուգայ և ականակուռ մասնիկներ ցուցնելով կուզէ անոր ծախել այս մասնիկները : Ձկնավաճառը անվիշապէս կհասկնայ որ իրը ադամանդ ցուցած քարերը պարզ փայլուն քարեր են , բայց կրտէ մասնիկները վաճառողին որ խափեալ խան դայ հետը որպէս զի իր սեղանաւորին միջոցաւ սակարկութիւն ըլլայ և ստակը հատուցուի բայց մասնիկները վաճառողը ետեէն չհամարձակիլ երթալ :



Մայրաքաղաքիս մէջ անցեալ շաբաթ օրը սկսաւ հրատարակել Մամուլ տնունով շաբաթական հանդէս մը , խմբագրութեամբ մեծ Գի. որդ. աղայի Յ. Այվազեան : — Ստորագրութեան տեղն է Պոլիս , Ձինճիլի խանի վերի յարկ թիւ 18 : — Տարեկանը 60 , վեցամսեայն 33 , խոկ հարկ 1 1/4 դուրուշ է :

ՏԵՐՄԻՆ ԵՒ ՏԵՐ
Հ. Ս. Ա. Ա. Ք. Ա. Ք. Ա. Ք.
Տ. Ա. Ք. Ա. Ք. Ա. Ք. Ա. Ք. Ա. Ք.